35-ՐԴ ՆԻՍՏ

12 Նոյեմբերի 1918թ.

Նախագահում է *Ա. Սահակյան*

Նախագահ - Նիստը հայտարարում եմ բացված. օրակարգի հարցերն են.

1. Պառլամենտական հանձնաժողովների լրացումների խնդիրը.
2. Օրինագիծ կորպուսի դատարանով մեղադրվածների պատժի թեթևացման մասին (Ա ընթերցում).
3. Օրինագիծ Ադրբեջանի կառավարության մոտ Հայաստանի դիվանագիտական միսիա հիմնելու մասին (Ա ընթերցում).
4. Օրինագիծ բամբակի գնման և վաճառման մասին (Ա ընթերցում).
5. Օրինագիծ Պարսկաստանում գտնվող գաղթականների օգնության մասին (Ա ընթերցում).
6. Օրինագիծ երկաթուղու կայարանի ծառայողների համար կոոպերատիվ խանութ բացելու մասին (Ա ընթերցում).
7. Օրինագիծ քաղաքների միության ծառայողների լիկվիդացիայի մասին (Ա ընթերցում).
8. Զինվորական ծառայության մեջ գտնված նախկին քաղաքացիական ծառայողների դիմումը՝ նպաստն իրենց վրա ևս տարածելու մասին.
9. Սոց[իալ]-դեմ[ոկրատական] ֆրակցիայի հարցապնդումը.
10. Մեծամասնականներին մի տեղ տալու խնդիրը:

Անցնում ենք օրակարգի առաջին հարցին: Որովհետև պառլամենտական հանձնաժողովներից շատերի կազմը լրիվ չէ պատգամավորներից շատերի հիվանդանալու պատճառով, առաջարկվում է ֆրակցիաներին՝ լրացնելու այդ հանձնաժողովների կազմը նոր անդամներով:

Մարտիրոս Հարությունյան - Մեր ֆրակցիան արդեն պատրաստել է հանձնաժողովներին աշխատող իր անդամների ցանկը: Ահա նա.

I. Ֆինանսական հանձնաժողով
   1. Վ. Տեր-Թորոսյան
   2. Ն. Աղբալյան
   3. Հ. Սարգսյան

II. Օրենսդրական հանձնաժողով՝
   1. Հով. Բուդաղյան
   2. Ս. Վրացյան
   3. Ս. Խաչատրյան

III. Զինվորական հանձնաժողով՝
   1. Ռ. Տեր-Մինասյան
   2. Ս. Վրացյան
   3. Ա. Շահմազյան

IV. Ինքնավարության հանձնաժողով՝
   1. Ս. Թորոսյան
   2. Ս. Խաչատրյան
   3. Ն. Աղբալյան

V. Խմբագրական հանձնաժողով՝
   1. Մարտ. Հարությունյան
   2. Ս. Թորոսյան
   3. Ն. Աղբալյան

VI. Կարգադրիչ հանձնաժողով՝
   1. Ե. Սարգսյան
   2. Մ. Հարությունյան
   3. Հակ. Տ[եր]-Հակոբյան

VII. Դպրոցական հանձնաժողով՝
   1. Տ. Ռաշմաճյան

2. Հակ. Տեր-Հակոբյան
3. Վ. Բաբայան

VIII. Պարենավորման հանձնաժողով՝
1. Ե. Սարգսյան
2. Մ. Տ[եր]- Գևորգյան
3. Ռ. Տեր-Մինասյան

IX. Գաղթականական հանձնաժողով՝
1. Ռ. Տեր-Մինասյան
2. Հակ. Տեր-Հակոբյան
3. Բժ. Ա. Բաբայան

X. Բժշկա-Սանիտարական հանձնաժողով՝
1. Բժ. Ա. Ղազարյան
2. Վ. Բաբայան
3. Բժ. Ա. Բաբայան

XI. Հողային հանձնաժողով՝
1. Հ. Սարգսյան
2. Վ. Տեր-Թորոսյան
3. Հով. Բուդաղյան

XII. Աշխատանքի հանձնաժողով՝
1. Հ. Սարգսյան
2. Վ. Բաբայան
3. *

XIII. Մանդատային հանձնաժողով՝
1. Հ. Սարգսյան
2.
3.

XIV. Նակազի հանձնաժողով՝
1. Հով. Բուդաղյան
2.
3.

XV. Հարցապնդումների հանձնաժողով՝
1. Հով. Բուդաղյան
2. Ս. Խաչատրյան
3. Բժ. Ա. Ղազարյան

Նախագահ - Որովհետև մյուս ֆրակցիաները բոլոր հանձնաժողովներում էլ ունեն իրենց ներկայացուցիչները և սրանց կողմից լրացումներ չպիտի լինեն, ուստի և անցնում ենք օրակարգի երկրորդ հարցին, այն է՝ օրինագիծ կորպուսի դատարանով մեղադրվածների պատժի թեթևացման մասին:

Մարտիրոս Հարությունյան - Խնդրում եմ այդ հարցը հետաձգել, որովհետև զեկուցանողը մեր ընկեր Հ. Բուդաղյանն է, որը զեկուցանելիք թղթերը մոռացել էր տանը, գնացել է բերելու:

Նախագահ - Անցնում ենք օրակարգի երրորդ հարցին, այն է՝ օրինագիծ Ադրբեջանի կառավարության մոտ Հայաստանի դիվանագիտական միսիա հիմնելու մասին: Զեկուցանողն է օրենսդրական հանձնաժողովի կողմից պատգամավոր Ա. Մալխասյանը:

Աբրահամ Մալխասյան - Արտաքին գործոց մինիստրությունը մի օրինագիծ է մտցրել Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական միսիա հիմնելու մասին: Այդ օրինագծի վերնագիրն է. «Օրինագիծ Ադրբեջանի կառավարության մոտ Հայաստանի դիվանագիտական միսիա հիմնադրելու մասին»: Օրինագիծը քննել է ֆինանսական հանձնաժողովը և ապա՝ օրենսդրական հանձնաժողովը. թե՛ մեկը և թե՛ մյուսը ընդունել է նույն բովանդակությունը, ինչ որ ներկայացված է:

* Այս և հետագա բացթողումները բնագրային են: Ծանոթ.խմբագ.:

Նախագահ - Հանձնաժողովը շտապողակա՞ն է համարում օրինագիծը:

Աբրահամ Մալխասյան - Ո՛չ: Օրինագիծը հետևյալն է.

Օրինագիծ
Ադրբեջանի կառավարության մոտ Հայաստանի դիվանագիտական միսիա հիմնադրելու մասին

1. Սույն հոկտեմբերի 15-ից հիմնել Ադրբեջանի կառավարության մոտ Հայաստանի դիվանագիտական միսիա:

2. Միսիայի գործունեության և իրավասության սահմանները որոշել համաձայն սույն օրինագծերին կցած արտաքին գործոց մինիստրության հաստատությունների վերաբերյալ ժամանակավոր կանոնադրությունը:

3. Միսիայի անձնական կազմը և ծառայողների ռոճիկները հաստատել համաձայն սրան կցած արտաքին գործոց մինիստրության պատկանող հիմնարկությունների շտատների:

4. Հաստատել միսիայի ծախսերի նախահաշիվը սույն տարվա հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակաշրջանի համար համաձայն նրան կցած արտաքին գործոց մինիստրության նախահաշվի՝ վերածելով նախահաշվի գումարները երկու և կես ամսվա-ընդամենը 24 հազար ռուբ.»:

Նախագահ - Խորհուրդն ուզու՞մ է անցնել օրինագծի ընդհանուր հիմունքների քննության, թե՞ ուղղակի հոդված առ հոդված քննության:

Խորհուրդն ընդհանուր հիմունքների մասին առարկություններ չի ունենում:

Նախագահ - Քանի որ խորհուրդն ընդհանուր հիմունքների մասին առարկություններ չունի, դիմում ենք օրինագծի հոդված առ հոդված քննության: Առարկություն չկա՞ սրա դեմ: Չկա: Պատգամավոր Մալխասյան, դիմեցեք օրինագծի հոդված առ հոդված ընթերցմանը:

Աբրահամ Մալխասյան - Կարդում է 1-ին հոդվածը:

Նախագահ - Առարկություններ չկա՞ն: Չկա: Անցեք երկրորդ հոդվածին:

Աբրահամ Մալխասյան - Կարդում է 2-րդ հոդվածը:

Նախագահ - Առարկություններ չկա՞ն: Չկա: Անցեք երրորդ հոդվածին:

Աբրահամ Մալխասյան - Կարդում է գ. հոդվածը:

Նախագահ - Առարկություններ չկա՞: Չկա: Անցեք չորրորդ հոդվածին: Պատգամավոր զեկուցանող, կցվա՞ծ է օրինագծի նախահաշիվը:

Աբրահամ Մալխասյան - Ոչ (կարդում է դ. հոդվածը):

Նախագահ - Առարկություններ չկա՞ն:

Դավիթ Զուբյան - Այդ հոդվածում ասվում է նախահաշիվը հաստատել հոկտեմբերի 15-ից: Ինչու՞ է հոկտեմբերի 15-ից հաստատվում, երբ այդ միսիան նոր է հաստատում:

Աբրահամ Մալխասյան - Այդ հարցը ֆինանսական հանձնաժողովը նույնպես քննեց, բայց որովհետև այդ միսիան փաստորեն հիմնված է եղել և ունեցել է շտատ և արել է այդ նպատակով հարկավոր ծախսերը, որոշեց թողնել օրինագծի այս հոդվածն ևս անփոփոխ:

Դավիթ Զուբյան - Այդ բացատրությունն անբավարար է և խորհուրդը չպիտի երբեք «Мертвые душы»-ներին* ռոճիկ տա: Առաջարկում եմ ծառայողներին ռոճիկ տրվի այն ժամանակից սկսած, երբ միսիան իր գործունեության մեջ կմտնի:

Հայկ Ազատյան - Քանի որ արտաքին գործոց մինիստրն այստեղ է, թող բացատրի այդ խնդիրը: Ադրբեջանի մեր դիվանագիտական միսիան դեռ երկու ամիս առաջ էր նշանակված, բայց Ադրբեջանի կառավարությունն այդ չէր ընդունել, ուրեմն այդ միսիան իրավունք չուներ ծախսեր անելու:

Մարտիրոս Հարությունյան - Այս հարցումն առանձին կերպով պիտի տրվի կառավարության: Այժմ չի կարելի:

* Մեռած հոգիներ, այսինքն ձևակերպված, բայց չաշխատող մարդիկ: Ծանոթ. կազմ.:

Հայկ Սարգսյան - Մենք իրավունք չունենք այդ հարցը չբարձրացնելու, որովհետև ծախսվում է ժողովրդի փողերը: Եթե այսօր այդ հարցը չքննենք, վաղը նույն նստարաններից մեզ կդիմեն և կասեն՝ թե ու՞ր էիք այդ օրինագծի քննության ժամանակ:

Ստ. Մամիկոնյան - Այն խնդիրները, որոնք արտաքին գործոց մինիստրին են վերաբերում, մի այլ նիստի պիտի քննենք և ոչ այսօր: Մեր դիվանագիտական ներկայացուցիչն Ադրբեջանում ուշ է նշանակվել. նա նշանակվել է Բաքվի տագնապալից օրերին: Ընդհանրապես այդպիսի պայմաններում պահանջել, որ նախահաշիվը սկզբից հաստատել և հետո ներկայացուցիչ ուղարկել, այդ բոլորովին անընդունելի է և աննպատակահարմար: Եթե նմանօրինակ խնդիրներ լինեն և կառավարությունը ժամանակ չունենա նախահաշիվ խորհուրդ մտցնելու, նա կարող է ներկայացուցիչ նշանակել և հետո միայն նախահաշիվ մտցնել: Եվ առավել, դա այնպիսի գործ է, որտեղ զեղծումներ չեն լինի:

Աբրահամ Մալխասյան - Մի հարց էլ կա, որ այստեղ պիտի որոշվի: Երբ ֆինանսական հանձնաժողովը քննում էր այս օրինագիծը, նա ընդունեց, որ դիպլոմատիկական ներկայացուցիչ նշանակում է կառավարությունը և ոչ թե պառլամենտը և այդ հիման վրա ընդունեց, որ նախահաշիվը հաստատվի հոկտեմբերի 15-ից:

Սմբատ Խաչատրյան - Խորհրդի յուրաքանչյուր անդամին հայտնի էր, որ նախահաշիվը չէր անցել, բայց մենք Թիֆլիսում և Ալեքսանդրապոլում ունեինք մեր դիվանագիտական ներկայացուցիչը. ինչու՞ դրա դեմ չբողոքեց ոչ մի անդամ: Եվ քանի որ այդ խնդիրն անցել է և մենք ոչինչ չենք ասել, հիմա կարիք չկա այս հարցի մասին նոր բողոք հարուցելու:

Արշամ Խոնդկարյան - Այս վերջին ճառախոսը շոշափեց մի հետաքրքիր հարց, որի վրա արժե կանգ առնել: Դիվանագիտական միսիան պիտի նշանակի պառլամենտը, իսկ եթե այդ նշանակված է նախքան պառլամենտի բացումը, այն ժամանակ այս վերջինի գումարվելու ժամանակ պիտի հայտարարվի այդ մասին: Պառլամենտական երկրներում այդպես է կարգը: Ռուսաստանում երբ չկար Պետական Դուման, ստրաժան նշանակում էր կառավարությունը, իսկ Պետական Դումայի ժամանակ ստրաժան ընտրվում էր վերջինիս կողմից:

[Ա.] Բ. *Աղաբաբեկով* - Իսկ Ալեքսանդրապոլի միսիա՞ն:

Արշամ Խոնդկարյան - Հարցնում են. «Իսկ Ալեքսանդրապոլի միսիա՞ն»-կպատասխանեմ, որ այդ նշանակում է մի նոր զանցառություն: Չպիտի խախտել պառլամենտական իրավունքը: Դիպլոմատիկական միսիան նշանակվում է պառլամենտի հիմնվելուց հետո և եթե այդ հարցը այսօր է քննության դրվում, նշանակում է, որ սրանից առաջ ոչ մի ներկայացուցիչ չենք ունեցել և նա իրավունք չուներ ծախսեր անելու և պիտի ծախքերը տալ այն ժամանակից սկսած, երբ կհիմնվի նա:

Ներքին գործոց մինիստր - Վերջին առարկությունը՝ թե պիտի նախ նախահաշիվը մտցնել խորհուրդ և վերջինիս կողմից հաստատվելու դեպքում միայն պետք է նշանակել ներկայացուցիչ, նոր դրություն է ստեղծում: Սակայն խորհուրդը մի օրենք է ընդունել, որի հիման վրա կառավարությունն իրավունք ունի մի ամիս ծախսեր անել, այնպես որ Ադրբեջանի ներկայացուցիչը կարող էր նշանակվել առանց սմետայի հաստատման:

Հայկ Սարգսյան - Ներքին գործոց մինիստրն արդեն պարզաբանեց խնդրի մի մասը. ես պիտի ավելացնեմ, որ արտաքին գործոց մինիստրի ներկայացրած նախահաշվի մեջ Ադրբեջանի Հայաստանի դիվանագիտական միսիայի նախահաշիվն էլ կա, միայն այն տարբերությամբ, որ սկզբից Ադրբեջանի մայրաքաղաքը Գանձակն էր, հիմա Բաքուն, որի ծախսերն ավելի են:

Նախագահ - Պատգամավոր Դ. Զուբյան, Ձեր առաջարկը տվե՛ք:

Դավիթ Զուբյան - Թույլ տվեք նախ առարկելու և ապա առաջարկը տալու: Շատ լավ եղավ, որ պատգամավոր Հայկ Սարգսյանը բացատրեց խնդիրը և ասաց, որ ներկայացուցչությունը լայնացել է: Այդ բացատրությունը չպիտի ընդունենք և այդ օրինագիծն էլ չպիտի հաստատենք, որովհետև չգիտենք, դեռ Բաքուն թուրքերի ձեռքում կմնա՞, թե՝ ոչ:

Աբրահամ Մալխասյան - Այս օրենքը կապ չունի Բաքվի հետ. մեր դիվանագիտական միսիան Ադրբեջանինն է:

Արշամ Խոնդկարյան - Ուշադրություն պիտի դարձնել այն հանգամանքի վրա, որ այդ զեկուցումը պառլամենտական ֆինանսական հանձնաժողովինն է. օրենսդրական հանձնաժողովը կանգ կառներ այդ հարցի վրա:

Ամեն մի նոր հիմնարկության հաստատում ունի երկու կողմ. հիմնարկության հաստատում և նախահաշվի հաստատում: Հիմնարկության հաստատումը միշտ վերապահված է պառլամենտին, իսկ այդ հիմնարկության բյուջետային իրավունքը՝ կառավարության: Եվ որովհետև այդ հիմնարկությունը չի հաստատված պառլամենտից, ուրեմն նրա նախքան հաստատվելը, ծախքերը չենք կարող տալ: Ֆինանսական հանձնաժողովը կանգ առավ այդ հարցի առաջ և այդ պատճառով էլ տվեց օրենսդրական հանձնաժողովին: Նա միայն նախահաշիվը պիտի քններ, իսկ հիմնարկության հաստատման հարցը թողներ օրենսդրական հանձնաժողովին:

Այս հանգամանքի վրա պիտի հրավիրել ձեր ուշադրությունը:

Ներքին գործոց մինիստր - Երբ որ խորհրդում անցավ այն օրենքը, ըստ որի կառավարությունն իրավունք էր ստանում մի ամսով ծախսեր անելու, դա չէր վերաբերում որոշ ժամանակաշրջանում հիմնված հիմնարկություններին, որովհետև նախահաշվի մեջ մտնում են այնպիսի հիմնարկությունների ծախսեր, որոնք նոր են հիմնվել: Օրինակ՝ ինժեներական, երկաթուղային և այլ ծախսեր են արված, որոնք նոր են հիմնվել: Ուզում եմ ասել, որ սա առաջին դեպքը չէ: Մի ամսվա ծախսը վերաբերում է և՛ նոր հիմնարկություններին և՛ նախահաշվին:

Դավիթ Զուբյան - Ինձ ձայն տվեք:

Նախագահ - Երեք անգամ է, ինչ խոսել եք դուք, պատգամավոր Զուբյան:

Դավիթ Զուբյան - Ըստ նակազի, երբ խոսք է տրվում մինիստրին, խոսք պիտի տրվի նաև պատգամավորին: Այն բացատրությունը, որ տվեց մինիստրը, ճիշտ չէ: Եթե հիշում է այդ օրենքը, այնտեղ ասված է, որ կարելի է անել այնպիսի ծախքեր, որ ներկայացնում են նախահաշվի մեջ և ոչ թե նախահաշվից դուրս: Եթե այդ կա նախահաշվի մեջ, էլ ինչու՞ եք ներկայացնում, իսկ եթե չկա, պիտի քննենք:

Նախագահ - Պատգամավոր զեկուցանող, այս խնդիրը քննվե՞լ է որևէ հանձնաժողովում, թե՞ ոչ և եթե քննվել է, ինչու՞ են այս վիճաբանությունները:

Աբրահամ Մալխասյան - Այս օրինագիծը քննվել է ֆինանսական և օրենսդրական հանձնաժողովներում, ֆինանսական հանձնաժողովին հետաքրքրում էր այն հարցերը, որ հաստատվում են այստեղ:

Սիր[ական] Տեր-Մարտիրոսյան - Նախահաշվի մեջ կան այդ ծախսերը: Այժմ եթե այդ ծախսերը շատացել են, այդ նշանակում է, որ միսիան փոխադրվելով Բաքու, շտատն էլ պիտի մեծացնել:

Դավիթ Զուբյան - Վերջապես կուզեի իմանալ, պառլամենտը պիտի իմանա, ո՞րն է ճիշտը և արդյոք այդ միսիան նու՞յնն է, ինչ առաջինը: Այդպես անկարելի է, ամեն մեկը մի բան է ասում: Վերջապես պիտի հասկանանք, թե չէ:

Նախագահ - Ո՞վ է պաշտոնապես զեկուցանողը:

Աբրահամ Մալխասյան - Օրենսդրական հանձնաժողովը հետաքրքրվում է օրինագծի իրավաբանական կողմերով:

Սիր[ական] Տ[եր]-Մարտիրոսյան - Այս թվերը նույնն են, ինչ նախկին նախահաշվի մեջ էին արտահայտված և հայտնում եմ, որ պաշտոնական զեկուցումը ֆինանսական հանձնաժողովի կողմից է:

Նախագահ - Պատգամավոր Զուբյան, բավարարվա՞ծ եք այս բացատրությամբ, թե պնդում եք ձեր առաջարկության վրա:

Դավիթ Զուբյան - Բավարարված չեմ և պնդում եմ իմ առաջարկության վրա:

Նախագահ - Տվեք Ձեր առաջարկությունը:

Դավիթ Զուբյան - Ըստ կարգի նախ պիտի քվեարկվի այդ օրինագիծը, հետո միայն կտամ իմ առաջարկությունը:

Ստ. Մամիկոնյան - Այս խնդրի շուրջը թյուրիմացություններ են առաջ գալիս գուցե հարմար լինի հետածգել օրինագծի քննությունն ուրբաթ օրվա նիստին:

Նախագահ - Օրինագծի առաջին ընթերցումն եղել է արդեն. մյուս նիստին կանենք երկրորդ ընթերցումը և ավելի լրիվ: Պատգամավոր զեկուցանողը նոր փորձ է անում բացատրելու:

Աբրահամ Մալխասյան - Ֆինանսական հանձնաժողովի նախագահը ճիշտ չասաց: Ընդհանուր նախահաշվի մեջ կար այս նախահաշիվը, բայց այնտեղ թվերը քիչ են, իսկ այստեղ՝ շատ:

Նախագահ - Պատգամավոր Զուբյան, արդեն առաջին ընթերցումն եղել է և դուք ընդունել եք այդ: Դուք նորի՞ց պնդում եք ձեր առաջարկության վրա:

Դավիթ Զուբյան - Որովհետև առաջին ընթերցման ժամանակ չգիտեինք, թե կգանք ու կանգ կառնենք այնպիսի մի կետի վրա, որն անընդունելի պիտի լինի, ուստի և պիտի հետածգել օրինագծի քննությունը, և այդ նակազը թույլ է տալիս:

Նախագահ - Քվեարկության եմ դնում այս առաջարկությունը:

Քվեարկվում է և ստանում է թեր՝ 11 և դեմ՝ 22 ձայն:

Նախագահ - Օրինագիծը չի հետածգվում: Արդեն առաջին ընթերցումն եղել է, իսկ երկրորդ ընթերցումը հետածգվում է հաջորդ նիստին: Անցնում ենք օրակարգի երկրորդ հարցի քննության, այն է՝ Օրինագիծ կորպուսի դատարանով մեղադրվածների պատժի թեթևացման մասին: Զեկուցանողն է օրենսդրական հանձնաժողովի կողմից պատգամավոր Բուդաղյանը:

Հովսեփ Բուդաղյան - Հունիսի 1-ին Ներքին Ախտայում մի լուր է տարածվել, թե թուրքերը գալիս են: Այս լսելով, այնտեղի զինվորները՝ թվով 28 հոգի, ջարդում են զինապահեստը և տանում են, ըստ մեղադրական թերթի՝ 100 լեբել հրացան և 70 մոսին հրացան, 38.000 լեբելի փամփուշտ և 14.000 մոսինի փամփուշտ: Մեղադրական թերթն ասում է, որ բացի այս, զինապահեստից պակասում է 20.000 փամփուշտ և 20 հրացան և որովհետև տեղական վաշտից պակասում են 16 զինվոր, ենթադրվում է, որ հենց այդ զինվորներն էլ տարել են: Բացակա 16 զինվորներից 2-ը չեն ներկայանում, իսկ 14-ը ներկայանում են, որոնցից 7-ին դատում են և վճռում, 2-ին՝ 3 տարի պատժիչ մասում (дисциплинарная часть), 1-ին՝ չորս ամիս, իսկ 4-ին՝ արդարացնում են:

Մեղադրական կետերն այս բոլորի վրա էլ միևնույն են, բայց դատարանը գտնում է, որ կարելի է չորսին ազատել: Մեղադրվողները ցույց են տվել վկաներ, որոնք չեն ներկայացել դատավարության ժամանակ, բայց այնուամենայնիվ դատարանն առանց վկաների հարցաքննության դատում է: Նրանք ցույց են տալիս վկաներ և ապացուցում են, որ այդ կողոպուտի օրը իրենք Ներքին Ախտայում չեն եղել, բայց դատարանը ուշադրություն չի դարձնում դրա վրա և շարունակում է իր դատավարությունը: Դատավարությունից հետո զինվորական մինիստրը նայում է այդ գործը և գտնում է, որ կարելի է 4 տարով դատապարտված զինվորներից երկուսին պատիժը մի տարով պակասեցնել, իսկ մյուս երկուսին՝ ոչ: Թե ի՞նչ պատճառաբանությամբ է զինվորական մինիստրը երկուսի վերաբերմամբ այդպիսի վճիռ անում, պարզ չէ:

Սակայն ուշադրության պիտի առնել մի հանգամանք, այդ այն է, որ մեղադրական թերթն ասում է, թե գողացված են 170 հրացան, որից 70-ը գտնվում են, իսկ 40-ը, իրենց ասելով, կորել են. այստեղ շատ զարմանալին այն է, որ մեղադրական թերթ կազմողներն իրենք ևս չգիտեն հրացանների թիվը: Բացի այս, դժվար է ենթադրել, որ այդ հրացաններն ու փամփուշտները տարել են 9 հոգին, որովհետև 1-ը չորս ամսով դատապարտված լինելով, արդեն ազատված պիտի լինի և, բացի այդ, ինչպես վկաների ցուցումներից երևում է, կողոպուտ անողների թիվը շատ մեծ է եղել, նույնիսկ նրանց մեջ եղել են մեծ թվով գաղթականներ և կանայք: Այս զինվորներին մեղադրելու գլխավոր պատճառը եղել է այն, որ սրանք կողոպուտի օրը բացակա են եղել վաշտից:

Հանձնաժողովը քննելով այս գործը, գտավ, որ հիմք չկա, որ այդ զինվորները բանտում մնան և պիտի ազատել նրանց, որովհետև մեղադրական պատճառաբանությունը թույլ է և դատավարությունն էլ անկանոն է եղել և բացի այդ, կողոպուտին մասնակցել են ավելի շատ թվով մարդիկ և չի կարելի դատել միայն 9 հոգի:

Ստեփան Մամիկոնյան - Որքա՞ն ժամանակ է, որ նրանք բանտարկված են:

Հովակիմ Բուդաղյան - Հունիսի 16-ից նրանք բանտարկված են:

Սմբատ Խաչատրյան - Առաջարկում եմ խորհրդին ընդունել հանձնաժողովի առաջարկն՝ ազատելու բոլորին էլ:

Հայկ Ազատյան - Որովհետև այդ թալանի ժամանակ շատ գաղթականներ են մասնակցել, հետաքրքիր է իմանալ, ուրիշ գողեր չեն բռնվա՞ծ:

Նախագահ - Պատգամավոր զեկուցանող, խնդրում եմ կարդաք զինվորների անունները և օրենսդրական հանձնաժողովի առաջարկությունը:

Հովակիմ Բուդաղյան - Պիտի ավելացնեմ զեկուցմանը, որ այդ զինվորներն իրենց խնդրում հայտնում են, որ ազատվելու դեպքում կմտնեն զորքի շարքը: Հանձնաժողովիս առաջարկն հետևյալն է.

"Заслушав доклад Законодательной комиссии по делу о солдатах обоза 3-ей Армянской бригады, кои корпусным судом отдельного Армянского корпуса осуждены 1) Аршак Оганесов, 2) Мхитар Тер Багдасаров, 3) Самсон Галустян, 4) Арутюн Осипов, 5) Татевос Акопов, 6) Казар Погосов, 7) Агабек Мартиросов, 8) Кегам Оганесов, 9) Айрапет Захаров и 10) Акоп Маралян-первые семь - к исключению из военной службы, лишению воинского звания, лишению всех особенных прав и преимуществ и отдаче в исправительные арестантские отделения сроком на четыре года каждый, следующие двое-к отдаче в дисциплинарную часть на три года каждый, с переводом на разряд штрафованных и потерею некоторых прав и преимуществ по службе, - а последний - Акоп Маралянц - с переводом в разряд штрафованных и лишении некоторых прав и преимуществ по службе, к одиночному заключению в военной тюрьме сроком на 2 месяца, в случае не возможности поместить его в военную тюрьму, к замене этого наказания содержанием под арестом на хлебе и воде в течении пяти недель, с перевозом в разряд штрафованных и прочими последствиями по ст. 52 С. В. П. 1869 года XXII книга, Совет Армении постановил:

Помиловать всех вышеупомянутых осужденных, востановить их во всех правах, какими пользовались осужденные до суда".

Նախագահ - Քվեարկության է դրվում օրենսդրական հանձնաժողովի առաջարկությունը: Ով համաձայն է, ձեռք է բարձրացնում:

Խորհուրդն ընդունում է միաձայն օրենսդրական հանձնաժողովի առաջարկությունը՝ ներումն շնորհել դատապարտված զինվորներին:

Նախագահ - Անցնում ենք օրակարգի չորրորդ կետին, այն է՝ բամբակի գնման և վաճառման օրինագծին: Զեկուցանողն է ֆինանսական հանձնաժողովի կողմից պատգամավոր Սիր. Տ[եր]-Մարտիրոսյան[ը]:

Սիր. Տեր-Մարտիրոսյան - Ֆինանսա-բյուջետային հանձնաժողովը քննելով ֆինանսների մինիստրի առաջարկած՝ մոնոպոլիայի ենթարկված բամբակի գնման և վաճառման արժեք նշանակելու օրինագիծը, հինգ ձայնով երկուսի դեմ ամբողջովին միացավ մինիստրի առաջարկության հետ և որոշեց ընդունել 1917/18թթ. համար ընդունած նորման, այն է՝ փութը 103 ռ. 05 կոպ. գնելու համար, իսկ ծախելու համար այդ գնի վրա ավելացնել 25-30%, միայն որպեսզի գործվածքների համար մասնավոր մարդուց ծախած բամբակը չշահագործվի, որոշեց ավելացնել հետևյալ 4-րդ կետը. «Ներքին շուկայի պահանջների համար բամբակը ծախելիս պատրաստվող ապրանքների վաճառման պայմանները որոշի ֆինանսների մինիստրը, համաձայնությամբ պետական կոնտրոլյորի»:

Փոքրամասնությունը համաձայն լինելով վերջին կետին, առաջարկում էր ընդունել 1916-1917թթ. միջին նորման ավելացրած 15% ծախքերի համար, գումարը՝ 75 ռուբ. փթին և վաճառել առքի գնով ավելացրած ծախքերի համար 1-6%, որպիսի կարծիքն ևս հանձնաժողովը գտավ կարևոր զեկուցելու խորհրդին:

Հայտնում եմ օրինագծի շտապողականությունը:

Նախագահ - Օրինագծի շտապողականության դեմ խորհուրդն առարկություն չունի՞:

Առարկություն չի լինում:

Նախագահ - Առարկություն չկա: Պատգամավոր զեկուցանող, անցեք օրինագծի ընթերցմանը:

Սիր. Տեր-Մարտիրոսյան - Կարդում է օրինագիծը:

Օրինագիծ
Մենավաճառի ենթարկված բամբակի առքի գնի մասին.

Ներկա տարվա սեպտեմբերի 11-ին ընդունված բամբակի մենավաճառի օրենքի հիման վրա կառավարության ձեռք բերած բամբակի առքի գինը սահմանել համաձայն այն գների, որ սահմանել է առևտրի և արդյունաբերության մինիստրի պարտադիր կանոնադրությունը 1917թ. սեպտեմբերի 8-ին ("Известия Эрив[анского] губ[ернского] Комиссариата". Ноябрь 18 и 24, N 82-83):

Ծանոթություն 1 - Հիշյալ գները համարել ֆրանկո կառավարության պահեստը:

Ծանոթություն 2 - Չմամլած (непресованный) բամբակի գինը հաշվել 6 ռ. պակաս:

Ծանոթություն 3 - Չմաքրած բամբակը ընդունվում է տիրոջ հաշվով մաքրվելուց հետո:

Ծանոթություն 4 - Բարդանները, տոպրակները և տարան բամբակի պատկանելիք են և դրանց համար առանձին վճար չի տրվում»:

Օրինագիծ
Մենավաճառի ենթարկված բամբակի վաճառման գնի մասին.

1. Պետական բամբակի համար սահմանել ամենաբարձր և ամենացածր վաճառման գինը՝ որոշելով ցածր գինը 25 տոկոս և բարձրը՝ 30 տոկոս ավել սահմանված առքի գներից, որը սահմանված է առևտրի արդյունաբերության մինիստրի պարտադիր որոշումով:

Ծանոթություն 1 - Չմամլած (непресованный) բամբակի գինը հաշվել 6 ռուբ. պակաս:

Ծանոթություն 2 - Բարդանները, տոպրակները և տարան բամբակի պատկանելիքն են և դրանց համար առանձին վճար չի տրվում:

2. Այս օրենքի առաջին հոդվածում սահմանված բարձր և ցածր գների սահմաններում թույլատրվում է ֆինանսների մինիստրին՝ սահմանել որոշ ժամանակվա համար վաճառման գներ պետական բամբակի վերաբերմամբ և հրապարակել «Կառավարության լրաբերում»:

3. Ֆինանսների մինիստրին թույլատրվում է պետական կոնտրոլյորի հետ համաձայնության գալով՝ որոշել պետական բամբակային գործառնության, հաշվետեսության և հաշվետվության կարգը, ինչպես և գործառնության վերաբերյալ դրամները գանձարան մտցնելու կարգը:

4. Ներքին շուկայի կարիքների համար գործադրվող բամբակի վաճառման պայմանները որոշի ֆինանսների մինիստրը պետական կոնտրոլյորի համաձայնությամբ:

Նախագահ - Օրինագծի ընդհանուր հիմունքների մասին առարկություններ չկա՞ն:

Ալ. Մել[իք] Աղաջանյան - Դուք այստեղ լսեցիք արդեն պատգամավորի զեկուցումից, որ հանձնաժողովում մեծամասնությունից բացի կար և փոքրամասնություն: Ինձ թվում է, որ ոչ մի ժամանակ Հայաստանի Խորհրդի առաջ չի դրվել այնպիսի մի ծանր խնդիր, ինչպիսինն հանդես է գալիս ներկա օրինագծով: Երբ մենք բամբակատերերին առաջարկում էինք թվեր բերել, որպեսզի իմանանք, թե նրանց վրա բամբակի փութը որքան է նստել, նրանք սրա փոխարեն զանազան,

խնդրին չվերաբերող հաշիվներ էին մեջ բերում և ապացուցում, որ բամբակի փութն իրենց վրա նստել է 103 ռուբլի: Այս օրինագծով բամբակատերերը պահանջում էին նույնիսկ տոկոս:

Այժմ ի՞նչ բնույթ ունի ներկա ձեռնարկությունը, արդյոք նա մի մասնավոր ձեռնարկությու՞ն է, թե՞ ընդհանրակառակը: Սա մի պետական գործ է և մենք այդ տեսակետով խնդրին պիտի մոտենանք: Ուկրաինայում երբեք չեն կարող ասել, թե որովհետև Հայաստանում հացի ֆունտը 5 ռուբլով է ծախվում, ուրեմն մենք ևս պիտի թանկ ծախենք, այնտեղ գինը տեղական պայմաններին համաձայն պիտի լինի: Եթե մենք 13 միլիոն ռուբլի տանք մի փոքրաթիվ մարդկանց, դա առնվազն ոճրագործություն է: Պետական գանձարանը հարստացնելու համար օրինագծի մեջ հիշատակված է, որ կառավարությունը 20-30 տոկոս վաճառման ժամանակ պիտի ավելացնի առքի գինը՝ հօգուտ պետական գանձարանի: Մենք առաջարկում ենք այդ տոկոսները դուրս գալ բամբակատիրոջից առքի ժամանակ: Մեր բուրժուազիայի ներկայացուցիչներին, որոնք միշտ ժողովրդի շահերից են ճառում, այս օրինագծով պիտի ցույց տանք, թե իսկապես, նրանք ժողովրդի շահերը պաշտպանու՞մ են, թե՞ ոչ: Մեր ֆրակցիան առաջարկում է բամբակի փթի առքի գինը նշանակել 35 ռուբլի:

Արշամ Խոնդկարյան - Այս օրինագծին, մեր ֆրակցիայի կարծիքով, Հայաստանի Խորհուրդը պիտի ցույց տա իր անդրանիկ քննությունը, թե նա որքան դեմոկրատիկ երկրի դեմոկրատիկ պառլամենտ է: Հանձնաժողովը բամբակի փթի առքի գինը նշանակել է 103 ռ. 05 կոպ: Շատ անհաջող փորձեր եղան գտնելու, թե մեր երկրում գտնված բամբակի ո՞ր մասն է 1916/17 թվի բերք և որը՝ 1917/18 թվի, որպեսզի ըստ այդ տարվա գների էլ որոշենք գինը: 1916/17թ. բամբակի պետական գինը 22 ռ. է եղել, իսկ 1917/18 թ. բամբակի գինը՝ 103 ռ. 05 կոպ., որովհետև ոչ մի հնարավորություն չեղավ ստուգելու այն, թե իսկապես մեր երկրում գտնված բամբակի որ մասն է 1916-1917 թվի բերք և որ մասը՝ 1917-18 թվի, ուստի և ամբողջ բամբակը համարեցին վերջին տարվա բերք և նշանակեցին գինն էլ 103 ռ. 05 կոպեկ: Հանձնաժողովում առաջարկ եղավ մեր երկրում գտնված բամբակի կեսը համարել առաջին տարվա բերք, իսկ մյուս կեսն էլ երկրորդ տարվա և արժեքն էլ նշանակել առաջին և երկրորդ տարվա բամբակի համար նշանակված պետական գների միջինը: Սակայն այս առաջարկն ևս մերժվեց. կարծես թե մեր երկրում գտնվող ամբողջ բամբակը 1917/18 թվի բերք է: Բացի այդ, կար նաև մի ուրիշ խնդիր, որն ազդեց գնի այդչափ նշանակման վրա, այդ արտասահմանում բամբակի համար ենթադրվելիք գներն են, այն է՝ Մոսկվայում՝ փութը 600 ռ., Բեռլինում՝ 500 ռ. և այլն: Թե բամբակի գինն այժմ որքան է Ամերիկայում՝ չիմացվեց և հնարավորություն էլ չկար իմանալու, այնինչ Ամերիկայի շուկան է լինելու բամբակի արժեքի կշռաչափը:

Սակայն մի բան պարզ է, որ մեր տերիտորիայում բամբակը կենտրոնացած է խոշորների ձեռքում, գյուղում էլ բամբակը կենտրոնացած է գյուղական կուլակների ձեռքում, իսկ գյուղացին ինքը բամբակ չի բերել և եթե գյուղացին բամբակ է բերել իր հետ, այդ նշանակում է, որ նա իր հետ ամեն ինչ է բերել: Սուրմալուի գավառում թողվել է բամբակի մեծ մասը, թեև էվակուացիան կատարվել է կանոնավոր կերպով: Իսկ այժմ ում ձեռքում որ կա բամբակ, դրանք բոլորն էլ խոշոր սկուպչչիկներ են: Մի դրություն պարզ է, որ բամբակը մեր կառավարությունը գնելու է հարուստներից և այդ հանգամանքն է, որ ազդել է գնի այնպիսի բարձր նշանակումի վրա: Եթե տեսնեիք այն անառողջ մթնոլորտը, ուր քննվում էր այդ հարցը, միանգամայն կհամոզվեիք ասածներիս:

Այսօր այս խնդրի առթիվ Հայաստանի Խորհուրդը պիտի ասի իր արդար և վճռական խոսքը, այն է՝ արդյոք պիտի բավարարի՞ սկուպչչիկների ու կուլակների պահանջները, թե՞ կանգնելով պետական տեսակետի վրա, մերժի այդ պահանջը: Հայաստանի Խորհուրդը պիտի լավ գիտենա, որ բամբակի գները հայտնի չեն մեզ և այն մարդիկ, որոնք Գերմանիայի հետ բանակցության մեջ էին մտնում Հայաստանի միակ հարստությունը մայր երկրից մի օտար երկիր ուղարկելու՝ հօգուտ իրենց գրպանների, այդպիսի մարդկանց պահանջը երբեք չպիտի բա-

վարարվի և պիտի Հայաստանի Խորհուրդը հանդես գա հանուն սովալլուկ գյուղացիության:

Վերջացնելով խոսքս, ուզում եմ հավատալ, որ Խորհուրդն առաջ կգնա դեմոկրատիկ տեսակետով և թույլ չի տա ոչ մի դեպքում, որ բամբակը այդպիսի բարձր գնով գնվի:

Սիր[ական] Տեր-Մարտիրոսյան - Ես միմիայն պատգամավոր Խոնդկարյանի ասածին մի ուղղում պիտի մտցնեմ, այն է, որ 1917թ. բամբակի փութը 28 ռուբլի է եղել, դա գրված է "Известия Эрив. Губернского Комиссариата" թերթում: Ես պիտի պաշտպանեմ հանձնաժողովի այն առաջարկը, ըստ որի հօգուտ գանձարանի առքի գնի վրա վաճառման ժամանակ պիտի ավելացնել 20 տոկոս: Ինչպես գիտեք, մեր պետությունը շատ ծախսեր ունի, իսկ եկամուտ համարյա թե չունի, դրա համար մենք պիտի այդ տոկոսը վերցնենք, հակառակ դեպքում վեց ամիս հետո կառավարությունը փող չի ունենա:

Աբրահամ Մալխասյան - Գանձարանի մասին մենք նույնպես պիտի մտածենք և զեկուցանողն առաջարկեց դրա համար իր ձևը, այն է՝ առքի գնի վրա ավելացնել 20 տոկոս և ապա վաճառել: Այս ձևը սրամիտ է, բայց հնացած և հատուկ միայն բուրժուական պետության: Դեմոկրատիկ պետությունը մի ուրիշ միջոց է գտել պետական գանձարանին օգուտ տալու և այդ եկամտային տուրքն է: Ոչ մի գրավական չկա, որ Հայաստանում բամբակի տերերը գյուղացիներ են, ընդհակառակն, բամբակը գտնվում է խոշոր վաճառականների և սկուպչչիկների ձեռքում և եթե վաճառենք բամբակի փութը առքի գնի, այն է՝ 103ռ.05կ. վրա ավելացրած 20 տոկոս, ի նկատի ունենալով իբր թե գանձարանի շահը, դրանով միայն կօգտվի բուրժուազիան և մեծապես կտուժի գյուղացիությունը: Առաջարկում ենք ուրիշ տեսակետ և այդ հետևյալն է: Ի նկատի ունենալով, որ բամբակի մեծ մասը Սարդարապատի կռիվների ժամանակ խոշոր վաճառականները և սկուպչչիկները գնել են հայ գյուղացուց փութը 14 ռուբլով, ուստի և առաջարկում եմ գրավել այդ բամբակը, որովհետև այդ բամբակը փրկվել է հայ գյուղացու արյան գնով: Եթե չանցնի գրավման առաջարկությունը, կառաջարկեմ՝ վճարել բամբակի փթին 1916թ. պետական արժեքը, այն է՝ 35 ռուբլի և բացի այդ, դրա մեջն հաշված նաև գանձարանի օգտին վերցվելիք 20 տոկոսը:

Արշ[ավիր] Մելիքյան – Պարոնայք պատգամավորներ, թեև մեր փոքրիկ Հայաստանը չունի բուրժուազիա բառի իսկական իմաստով, բայց մեր ազգի ունևոր դասը յուրացրել է նրա բոլոր բացասական կողմերը: Երբ հեղափոխության ժամանակ հարց էր դրվում, թե ո՞ր դասակարգն է, որը վնասում է ժողովրդի շահերը, բուրժուաներն ասում էին՝ դա սոցիալիստական կուսակցություններն են: Ես շեշտում եմ, որ ամենուրեք վնասակար տարրը բուրժուազիան է եղել, որն աչքի է ընկել իր ագահությամբ և նույնիսկ բոլոր դասակարգերին իրեն գերի է դարձրել: Այս օրինագիծը ցույց է տալիս, որ մեր բուրժուազիան յուրացրել է դրանց բացասական կողմերը և սրա մեջ վարվում է այնպես, ինչպես Ռուսաստանում՝ ռուս բուրժուազիան: Երբ դուք բամբակատերերի ներկայացուցիչներին հարցնում եք, թե ո՞ր տարվա բերք է այդ բամբակը, նրանք ոչինչ չեն ասում. երբ հարցնում եք, ո՞ր տարվա գներն են, նրանք պատասխանում են՝ վերջին տարվա: Ուրեմն բամբակն էլ վերջին տարվա է: Այդ փաստը ցույց է տալիս, որ բուրժուազիան կամենում է իր ապրանքը ծախել այնպիսի գներով, որը իրականությանը չի համապատասխանում: Եթե կար մի դասակարգ, որը քարուքանդ արեց Ռուսաստանը, այդ բուրժուազիան էր: Նույն բանը Հայաստանի վերաբերմամբ են ուզում անել: Նա ոչ մի զոհողություն չի ուզում անել երկրին: Ինձ համար տարօրինակ թվաց այն բանը, երբ ընկեր Մալխասյանը ասաց, որ ի միջի այլոց կարելի է նույնիսկ կոնֆիսկացիայի ենթարկել բամբակը: Ոչ թե պիտի ասել «ի միջի այլոց», այլ հաստատ կերպով, որ բամբակը պիտի կոնֆիսկացիայի ենթարկել: Պատերազմի ընթացքում այդ բուրժուազիան հարյուր հազարներ է շահել և նա ոչինչ չի կորցրել: Ես առաջարկում եմ գրավել բամբակը, որովհետև այդ հանգամանքը կբարձրացնի երկրի տնտեսական դրությունը: Եթե դուք հնարավորություն ունեք այդ դասակարգը ձեր ձեռքում պահելու, երբեք սխալված չեք լինի: Տնտեսական

անհրաժեշտությունը ստիպում է նրանց ճնշել: Երբ այստեղ հարց է դրվում, թե ինչպե՞ս բարձրացնել երկրի տնտեսական դրությունը, պետք է անպայման անցնել բուրժուազիայի վրայով, հանուն ժողովրդի շահերի պիտի զոհել բուրժուազիան:

Նախագահ - Հայտարարում եմ ընդմիջում:

Ընդմիջում

Նախագահում է փոխ-նախագահ Գրիգոր Տեր-Խաչատրյանը:

Նախագահ - Նիստը հայտարարում եմ վերսկսված: Խոսքը պատկանում է պատգամավոր Երվանդ Հարությունյանին:

Երվանդ Հարությունյան - Վերջին երկու պատգամավորներն իրենց ճառի ընթացքում մատով ցույց են տալիս միշտ մեր ֆրակցիայի կողմը և ասում՝ «ահա բուրժուազիան»: Մենք քանիցս պնդել ենք, որ այստեղ բուրժուազիա չկա և եթե պատգամավոր Մելիքյանը շեշտում էր իր ճառում բուրժուազիա խոսքը, այդ նրա համար միայն, որ իր գոյությունը հաստատի:

Արշամ Խոնդկարյան - (Տեղից) Էնֆեաճյանն ի՞նչ է:

Երվանդ Հարությունյան - Պատգամավոր Արշ. Մելիքյանը դասակարգային շահերի պաշտպանության անունից խոսելով, հայ ժողովրդի շահերը չի պաշտպանում և եթե կուզեք՝ հայ ժողովրդի դժբախտության պատճառը բոլշևիզմն է:

Սահակ Թորոսյան (տեղից) - Սխալ է այդ տեսակետը:

Երվանդ Հարությունյան - Պատգամավոր Ար. Մելիքյանն ասում է, որ Հայաստանի Խորհուրդը պարտավոր է զոհաբերել մի դասակարգի շահերը հանուն ժողովրդի շահերի: Պատգամավոր Ա. Մելիքյանը 3 ամսվա ընթացքում Հայաստանի Խորհրդում բոլշևիկական տեսակետ չի կիրառել, այլ զուտ իրական տեսակետ, իսկ այսօր հանկարծ սկսում է բոլշևիկական տեսակետ պաշտպանել: Մեր կուսակցությունը բուրժուական տեսակետի վրա կանգնած չէ և այստեղ բուրժուազիայի ներկայացուցիչներ էլ չկան, որ պաշտպանեն նրա շահերը. մեր կուսակցությունը կանգնած է պետական տեսակետի վրա: Ոչ մի խմբակցության շահեր մենք չենք պաշտպանում և եթե այստեղ կոնֆիսկացիայի հարց են բարձրացնում, ես ևս համաձայն եմ դրան, միայն այն փոփոխությամբ, որ այդ կատարվի անհատների վերաբերմամբ, որովհետև կան անհատներ, որ այդ կոնֆիսկացիայից երբեք չեն վնասվի: Այս առաջարկը նրա համար է, որպեսզի Հայաստանի սահմաններից դուրս բամբակ ունեցող մարդիկ այդ օրենքի (կոնֆիսկացիայի) հիման վրա չվնասվեն:

Արշամ Խոնդկարյան - (Տեղից) խե~ղճ մարդիկ:

Երվանդ Հարությունյան - Ինչ վերաբերում է բամբակի գնի նշանակումին, պիտի նաև որոշել, ինչքան է նստել բամբակը բամբակատիրոջ վրա և ապա նշանակել նրա գինը:

Արշավիր Մելիքյան - Մի քանի անգամ այս ամբիոնից պատգամավորները թույլ են տվել իմ հասցեին այնպիսի խոսքեր, որոնք զրպարտություն են եղել միայն և այս եղել է միշտ աջից: Աջակողմում նստած պատգամավորները, որոնք են՝ պարոն Ստ. Մալխասյանը, որը գնացել է և որին բարի ճանապարհ ենք մաղթում, և պատ[գամավոր] Երվանդ Հարությունյանը, մի քանի անգամ շեշտել են, որ Ռուսաստանի քանդողները բոլշևիկներ են եղել: Ես կասեմ, Ռուսաստանի անկման պատճառն եղել է ձեր կուսակցությունը, պատգամավոր Եր. Հարությունյան, որ ամեն ջանք գործ էր դնում, որ պատերազմը շարունակվի: Մենք էինք, որ վերջնականապես պահանջում էինք վերջ տրվեր այդ խաղին: Բուրժուազիան էր համաշխարհային պատերազմի պատճառը և դրանց մեջ պետք է որոնել չարիքների պատճառը: Ապագայի պատմաբանը ձեր ոտքից կբռնի և կասի ձեզ՝ դուք եք մեղավորը: Եթե բոլշևիկական կառավարությունն ուժեղ լիներ այն ժամանակ, ես կիմանայի, թե ձեր հետ ինչպես խոսել: Ես միշտ անխնա պիտի լինեմ ձեզ հետ: Եթե կռվի մեջ դուք իմ ձեռքն ընկնեք, ես ձեզ չեմ խնայի (բուռն ծափեր):

Սահակ Թորոսյան - Եթե բուրժուազիա բառը վերցնենք այն իմաստով, որ գործ են ածում Եվրոպայում, այդպիսի բուրժուազիա մեզնում չկա, սակայն դա չի նշանակում, որ Հայաստանում բուրժուազիա չկա: Հայերի մեջ եղել է մի դասակարգ, որ իր շահերով է տարվել և ազգի սրբությունները ծառայեցրել է իր դասակարգի շահերին: Բամբակի խնդիրն այսպես պիտի պատկերացնել. այն բամբակը, որ գտնվում է կուլակների ձեռքում, դա 1918 թվի բերքը չէ, այլ 1916 թվի բերքն է, որը գտնվում է կուլակների ձեռքին: Այդ տեսակետից մենք պետք է կանգնենք պետական տեսակետի վրա և բամբակը վերցնենք հին գների համաձայն. այդ միայն նպաստավոր կլինի պետության համար: Մենք պիտի պաշտպանենք այն գինը, որը կնպաստի պետական գանձարանի հարստացման, ուրեմն և հայ ժողովրդի բարօրության: Բամբակատերերը հին և էժան գներով առած բամբակն ուզում են նոր և թանկ գներով ծախել, որի դեմ մենք պետք է կռվենք և, իմ կարծիքով, այս խնդրում ամբողջ խորհուրդը պետք է համաձայն լինի:

Վարդ. Տ[եր]-Թորոսյան - Դաշնակցություն ֆրակցիան հանդես է գալու այսօր ձեր առաջ և ապացուցելու է, որ նա միշտ ժողովրդի շահերի պաշտպան է և այդ նրա 30 տարվա պատմությունն է թելադրում նրան: Խնդիրը պիտի պարզ դրվի՝ կամ կոնֆիսկացիա, կամ՝ մոնոպոլիա: Կոնֆիսկացիան քննության հարց չի դառել և չի էլ անցել, այլ անցել է մոնոպոլիան: Պարտք եմ համարում ասելու, որ այս խնդրում վեճեր են եղել նաև բոլշևիկների մեջ Մոսկվայում և վերջացել է նրանով, որ մերժվել է կոնֆիսկացիան և ընդունվել է մոնոպոլիան, այն պայմանով միայն, որ այդ գումարը մտնի պետական գանձարան: Դաշնակցություն ֆրակցիան գտնում է, որ մոնոպոլիան պիտի մնա: Ինչ վերաբերում է գների խնդրին, այս մի քանի անգամ եկել է հանձնաժողով և ուղարկվել է մինիստրություն՝ բացատրություններ ուղարկելու: Հանձնաժողովը ձեռքի տակ չի ունեցել մատերիալ, այլ հիմնվել է մինիստրական խորհրդի և ֆինանսների մինիստրի բացատրության վրա և այդ պատճառով էլ նրա եզրակացությունը սխալ է եղել: Եթե մենք իմանայինք, թե ինչքանով է ծախվել և գնվել բամբակի փութը, մենք այն ժամանակ այլ եզրակացության կգայինք: Գնման համար պիտի հիմք ունենանք, որովհետև այդպիսի գինն է միայն ամուրը: Սոցիալիստ-հեղափոխականների և Սոցիալ-դեմոկրատների ներկայացուցիչները հանձնաժողովում առաջարկում էին 1916 թվի բամբակի փթի համար նշանակված արժեքի, այն է՝ 27 ռ. և 1917 թ. արժեքի, այն է՝ 103 ռ. 05 կ. ընդհանուր գումարի կեսը, այն է՝ 70-80 ռ. փթին: Այդ ևս սխալ է: Այժմ ունենալով ձեռքի տակ մատերիալ, որ 1917/18թ. բամբակի ներմուծում չի եղել և այն բամբակը, որը կենտրոնացած է մեր երկրում, եղել է միայն 1916 և 1917 թվերին: Դաշնակցություն ֆրակցիան եկավ հետևյալ եզրակացության և որպեսզի հիմք ունենա՝ ընդունեց, որ այդ բամբակը երեք սեզոնի է, այն է՝ 1915, 1916 և 1917 թվերի: Այդ երեք տարվա բամբակի գների, այն է՝ 1915 թվին փ. 22 ռ. 50 կոպ., 1916 թ.՝ փ. 27 ռ. 50 կոպ. և 1917 թ.՝ փ. 103 ռ. 50 կոպ., միջին թիվն առաջարկում է ընդունել որպես առքի գին, այն է՝ 49 ռ. 50 կոպ., սրա մեջ հաշվելով նաև ծախքերը:

Երվանդ Հարությունյան - Փաստական մի ուղղում պիտի անեմ, որ մեր կուսակցությունը մի տարվա կուսակցություն է:

Արշամ Խոնդկարյան - Մի ուղղում պիտի անեմ, որ իբր թե դաշնակցություն ֆրակցիան էսեռների և էսդեկների հետ միասին համաձայնության է եկել 1917թ. և 1918թ. բամբակի գները գումարելու և միջին թիվն ընդունելու որպես բամբակի առքի գին: Այս չի համապատասխանում իրականության: Դաշնակցության երեք ներկայացուցիչներն էլ ֆինանսական հանձնաժողովում ձայն են տվել 103 ռ. 05 կոպ. գնին: Միայն էսեռների և էսդեկների ներկայացուցիչներն էին, որ այդ գնի դեմ բողոքել են: Որովհետև հանձնաժողովում պնդում էին, թե բամբակն ամբողջովին վերջին տարվա է, դրա համար և մենք առաջարկեցինք գումարել 1916 և 1917 թվերի բամբակի համար նշանակված գները և դրա միջին թիվն ընդունել որպես առքի գին: Իսկ այժմ, երբ պարզվեց, որ այդ բամբակի մեջ կա նաև 1915թ. բամբակ, ուրեմն և գումարելով այդ թվի բամբակի գինը 1916 և 1917 թվերի

բամբակի համար նշանակված գնի վրա, այդ երեք տարվա գների գումարի միջին թիվը, որպես այժմյան համար առքի գին, մենք ընդունում ենք և ծայն ենք տալիս:

Հայկ Ազատյան - Բամբակի գինը որոշելիս անհրաժեշտ է ի նկատի ունենալ հաստատուն գները, պիտի ի նկատի ունենալ, թե ո՞ր տարվա բերքն է դա: Մեր երկրում այժմ գտնված բամբակի մեծ մասը 17 թվականի բերք է, որովհետև այդ տարին այստեղից բամբակ չի արտահանվել Ռուսաստան և մնացել է բամբակատերերի ձեռքին: Այստեղ փորձված մարդիկ ասում են, որ նույնիսկ 16 և 15 թվականներին բավականի[ն] բամբակ է մնացել, հետևապես այդ թվերի շրջանակում պետք է խոսենք: Եթե ասենք, թե դա ժամանակին չի համապատասխանում, մենք դրա հետ համաձայն չենք: Դուք հիշում եք, երկու ամիս առաջ, երբ մեր գաղթականները գաղթում էին, բամբակի փութը ծախվում էր 14 ռուբլիով, այդ ժամանակ հենց նույն բուրժուազիան այդ գներով առել և կուտակել է, իսկ հիմա ուզում է թանգ գներով ծախել: Երբ նրանցից պահանջում ես գրքեր, թե ե՞րբ է առել և քանիսո՞վ, նրանք ասում են, թե Գերմանիայում բամբակի փութն արժե 500 ռուբլի: Մեր պետությունն առանց ի նկատելու դրսի աշխարհի գինը, պետք է առաջնորդվի իրական գներով և մեր երկրի պահանջներով և համաձայն դրան գնի բամբակը: Մեր ֆրակցիան դեմ է նաև այն տեսակետին, թե բամբակը պետք է կոնֆիսկացիայի ենթարկել. դա մանր բուրժուական տեսակետ է: Եթե մենք այս տարի այդպես անենք, այն ժամանակ հետևյալ տարին գյուղացիները բամբակ չեն ցանի: Դրանով երկրի տնտեսությունն ամբողջովին կքայքայվի: Դրա համար և պատգամավոր Մելիքյանի հայտարարությունն ուշացել է, որովհետև նույն բանը նրա համախոհներն արեցին Պետրոգրադում, բայց հետո փոշմանեցին: Մենք ասում ենք, որ որոշ գումար պետք է տալ և մենք կանգ ենք առնում 35 ռուբլու վրա:

Հովհ. Մելիքյան - Ինչ որ մինչև այժմ ասվեց բամբակի մասին և, թե՛ ֆրակցիաների և թե՛ կոմիսիայի առաջ բերած թվերը ցույց են տալիս, որ այդ հարցին ծանոթ չեն և մեջ բերած թվերն էլ ենթադրական են: 1915թ. բամբակ Երևանում չկա: Սրա հետ միասին Երևանից դուրս է գնացել նաև 1916 թվի բամբակը: Մեր երկրի բամբակի բերքն ընդամենը 1200 վագոն է, դրանից միայն 180 վագոնն է մնացել Երևանում, իսկ մնացածից մոտավորապես 800 վագոն դուրս է գնացել:

Ասում են, որ այստեղ գնված բամբակը 1915/16 թվերի բերք է և քիչն է միայն 1917 թվի բերք: Պիտի ասեմ, որ հին բերքն արդեն կապված է, իսկ 1917 թվի բամբակը, որ դեռ բաց է, գտնվում է գյուղացիների ձեռքում և մանր վաճառականների մոտ: Հետո միանգամայն սխալ է այն, թե Սարդապատից բամբակ չի եկել: Երևան բամբակ եկել է՝ Ղամարլուից, Չիգդամլուից, Էջմիածնից և ուրիշ տեղերից: Երևանում այժմ կա 300 վագոն բամբակ, որից 180 վագոնն է միայն բուրժուաների ձեռքում, մնացածը գտնվում է գյուղացիների մոտ:

Ինչ վերաբերում է այն մեղադրանքին, թե վաճառականները ցույց չեն տվել իրենց հաշվեգրքերն և թե ինչքանով են գնել բամբակը, սխալ է և անարդարացի, որովհետև ցույց են տվել, որ բամբակի մեծ քանակը 1916 թվի բերք է. այս արձանագրության մեջ էլ կա:

Ինչ վերաբերում է 1916թ. բամբակի պետական գնի ծագման մասին, պիտի հետևյալն ասեմ. թե՛ Մոսկվայում և թե՛ Պետրոգրադում կայացած կոմիսիաներում մասնակցել եմ և գնի որոշման շուրջը մինիստրությունները վեճի մեջ էին: Վերջ ի վերջո պետությունը կանգնեց հետևյալ տեսակետի վրա. որովհետև բամբակի մեծ մասն արտահանում են թուրքերը և նրանք էլ չեն մասնակցում պատերազմի ծանրություններին, այդ պատճառով էլ բամբակի գինն իջեցվեց և նշանակվեց 27 ռուբ. 50 կոպ.: Գյուղացիները այդ գնով չեն ուզել վաճառել և վաճառականների վրա այդ բամբակը նստել է 35 ռուբ. փութը, պատահել են դեպքեր, որ այդ տարի բամբակի փութը գնվել է նույնիսկ մինչև 80 ռուբլի: Այն մեղադրանքը, թե վաճառականները ցույց չեն տալիս իրենց հաշվեգրքերը, անտեղի է, որովհետև պատերազմի պատճառով կարող է պատահած լինել, որ փոխադրած լինեն ուրիշ վայրեր:

1917 թվի բամբակի համար նշանակված պետական գինը 103 ռ. 05 կոպ. [է], և ֆինանսական կոմիսիան կանգնեց այդ գնի վրա: Պիտի ասեմ, որ բամբակի սպեկուլացիա չի կատարվում և նույնիսկ մի քանի ֆիրմաներ ոչնչանում են: Բամբակի փութը 17-18 ռ. գնելու դեպքեր չեն եղել:

Բացի այս բոլորից, խորհրդի ուշադրությունը մի բանի վրա ևս պիտի հրավիրեմ: Այդ հետևյալն է. եթե կառավարությունն էժան գնով գնի բամբակը, նրա ծեռքը կընկնի միայն 180 վագոն, իսկ այդ որոշման տակ հայկական ապրանք, մոտավորապես 3000 փութ, էժան կերպով կվաճառվի օտար պետություններին: Ադրբեջանում հայ վաճառականներն ունեն մեծ քանակությամբ բամբակ, որ հասնում է 3000 վագոնի և որ այժմ թուրքերը սեփականացրել են: Այս որոշումով իրավունք կտանք թուրքերին՝ Հայաստանի ապրանքը սեփականացնելու:

Մի քանի խոսք ևս Ամերիկայում բամբակի համար եղած գնի մասին: Պատգամավոր Ազատյանն ասում է, որ մեզ հայտնի չէ, թե այնտեղ բամբակի գինն ինչքան է, բայց ես ցույց կտամ նրան, որ այդ հայտնի է: Անցյալ տարի Ամերիկայում բամբակի փութն արժեր 35 ռուբլի, իսկ այժմ հասած պիտի լինի 200 ռուբլու և այդ ահա թե ինչպես: Անցյալ տարի ստերլինգը 9 ռ. 40 կոպ. արժեր, այժմ ստերլինգը արժե 60-70 ռուբլի:

Նախագահ - Խոսողների ցանկը փակված է: Վերջին խոսքը պատկանում է պատգամավոր Արշավիր Մելիքյանին՝ անձնական բացատրության համար:

Արշավիր Մելիքյան - Պատգամավոր Ազատյանը մի շարք առասպելներ ասաց այս ամբիոնից բոլշևիկների մասին: Նա ասաց, որ կոնֆիսկացիան բուրժուական տեսակետ է. եթե այդ այսպես է, ապա ինչով բացատրել այն կռիվը, որ կա այժմ մեր և բուրժուազիայի միջև: Պատգամավոր Ազատյանը փոխանակ անճիշտ տեղեկություններ ասելու, թող հսկի իր ֆրակցիային, ուր միմյանցից բոլորովին անտեղյակ որոշումներ են կայանում: Հանձնաժողովում նրանք կողմնակից են 85 ռուբլուն, իսկ ֆրակցիան 35 ռ. [է] որոշել և այդ ֆրակցիայի անդամ, պատգամավոր Մալխասյանը, չնայած ֆրակցիայի որոշման, կողմնակից է կոնֆիսկացիային:

Հայկ Ազատյան - Անձնական բացատրության համար խնդրում եմ ինձ ձայն տալ:

Նախագահ - Անձնական բացատրության անձնական բացատրությամբ չեն պատասխանում: Այդ կթողնվի հաջորդ նիստին, որովհետև ըստ նակազի թույլ է տրվում անձնական բացատրության համար միայն մեկին: Խոսքը պատկանում է պատգամավոր զեկուցողին:

Սիր[ական] Տեր-Մարտիրոսյան - Մեր երկիրն առանց այն էլ աղքատ է և այդ պատճառով մեր երկրի համար արժեքավոր իրեր պիտի ստեղծել, ինչպես օրինակ՝ բամբակ, բրինձ, ցորեն և այլն: Ռուսաց կառավարությունը բամբակի զբաղմունքը զարգացնելու համար բամբակի գինը բարձրացնում է: Մենք ևս այդ խնդրին պետք է զգույշ վերաբերվենք և այն էլ պետական տեսակետով: Երկու վաճառական գրավոր փաստաթղթեր են ներկայացրել, որ 16 թվականին բամբակի փութը գնել են 35 ռուբլիով, իսկ 1917 թվին՝ 80 ռուբլիով: Որպեսզի հաստատուն գին կարողանանք նշանակել և նրանց ազատենք անել դրությունից, կարելի է այս խնդիրը հետաձգել մանրամասն ուսումնասիրելու համար և հետո խորհուրդ բերելու:

Նախագահ - Նակազի հիման վրա պիտի քվեարկության դնեմ բամբակի գնի համար առաջարկվելիք այն թիվը, որ կոմիսիայի առաջարկած [հց] շատ հեռու [է]: Նախ քվեարկության եմ դնում կոմիսիայի անդամի առաջարկությունը՝ հետաձգել այս օրինագծի քննությունը:

Ո՞վ կողմնակից է հետաձգման:

Հայկ Ազատյան - Կոմիսիան հայտնել է օրինագծի շտապողականությունը և այն էլ ինքը՝ պատգամավոր Սիր. Տեր-Մարտիրոսյանն այդ հայտնեց, որ այն դոկումենտները, որոնց հիման վրա պիտի որոշենք գինը, գտնվում են Մոսկվայում: Եթե պիտի սպասենք տարիներ՝ այդ գինը որոշելու համար, այդ ուրիշ հարց է:

Նախագահ - Որովհետև հետաձգման առաջարկը չի անցնում, անցնում ենք օրինագծի հոդված առ հոդված քննության: Պատգամավոր Ս. Տեր-Մարտիրոսյան, անցե՛ք օրինագծի ընթերցմանը:

Սիր[ական] Տեր-Մարտիրոսյան - Կարդում է առաջին հոդվածը:

Նախագահ - Այս հոդվածի մասին ո՞վ առաջարկություններ ունի: Պատգամավոր Ազատյան, խոսքը ձերն է:

Հայկ Ազատյան - Եթե ընդունվի այն իմ առաջարկը գնի մասին, այն ժամանակ այս օրինագիծն այլևս չի կարող բավարարել մեզ: Առաջարկում եմ քվեարկել նախ այդ առաջարկը և ապա կորոշենք, թե այս օրինագիծը կարելի՞ է այլևս քննության առնել, թե՞ ոչ:

Սիր[ական] Տեր-Մարտիրոսյան - Այստեղ գինը որոշ է, ուրեմն կարելի է օրինագիծն ընդունել:

Նախագահ - Քվեարկության է դրվում Սոցիալ-դեմոկրատների առաջարկը, այն է՝ բամբակի փթի գինը նշանակել 35 ռուբլի և այդ գնի 20 տոկոսն էլ վերցնել հոգուտ գանձարանի:

Առաջարկությունը քվեարկվում է և ստանում է թեր 5 ձայն, որ և չի անցնում:

Նախագահ - Քվեարկության է դրվում դաշնակցություն ֆրակցիայի առաջարկը, այն է՝ բամբակի փթի գինը նշանակել 49 ռուբ. 50 կոպ.:

Առաջարկությունը քվեարկվում է և ստանում է թեր 20 ձայն, որ և անցնում է:

Նախագահ - Նակազի հիման վրա երրորդ առաջարկն այլևս չեմ դնում քվեարկության: Պատգամավոր Սիր. Տեր-Մարտիրոսյան, անցե՛ք հաջորդ հոդվածին:

Սիր. Տեր - Մարտիրոսյան - Կարդում է առաջին ծանոթությունը:

Առաջարկություն չի լինում և ընդունվում է:

Սիր[ական] Տեր - Մարտիրոսյան - Կարդում է երկրորդ ծանոթությունը:

Հովհ. Մելիքյան - Առաջարկում եմ այդ ծանոթության միջից 6 ռուբլին դուրս հանել:

Խորհուրդն ընդունում է առաջարկությունը:

Երրորդ և չորրորդ ծանոթությունները նույնությամբ ընդունվում են:

Նախագահ - Անցնում ենք բամբակի վաճառման գնի օրինագծին:

Սիր[ական] Տեր-Մարտիրոսյան - Կարդում է օրինագիծը:

Մարտիրոս Հարությունյան - Առաջարկում ենք վաճառման գնի համար մշակված օրինագիծն այժմ չընդունել, որովհետև պայմանները կփոխվեն ապագայում և հետո որպեսզի հարկադրված չլինենք այդ օրինագիծը փոփոխության ենթարկելու:

Արշամ Խոնդկարյան - Այդ առաջարկությունն ընդունում ենք միայն այն պայմանով, որ այդ բամբակը չօտարացվի և չպահվի:

Սիր. Տեր-Մարտիրոսյան - Առաջարկում եմ այսօրևեթ քննության առնել օրինագիծը և որոշել վաճառման գինը ևս:

Նախագահ - Քվեարկության եմ դնում այս առաջարկությունը: Ո՞վ կողմնակից է այսօր ևեթ քննության առնել օրինագիծը և որոշել վաճառման գինը:

Առաջարկությունը քվեարկվում է և չի անցնում:

Նախագահ - Բամբակի գնման գնի օրինագծի երրորդ ընթերցումն առաջարկում եմ կատարված համարել և նույնությամբ ընդունել:

Առաջարկությունն ընդունվում է:

Սիր[ական] Տեր-Մարտիրոսյան - Առաջարկում եմ օրինագիծը չհանձնել խմբագրական հանձնաժողովին, այլ ընդունել նույն խմբագրությամբ և այսօր էլ անել վերջնական հաստատությունը:

Առաջարկությունը չի ընդունվում:

Հայկ Ազատյան - Այս օրինագիծը կարևոր օրինագիծ է և առաջարկում ենք ամբողջովին քվեարկության դնել այդ տեսնելու, թե ովքեր են կողմնակից այդ օրինագծին, որպեսզի չիմացվի, թե խորհուրդն ամբողջովին միաձայն ընդունել է այդ: Մեր ֆրակցիան դեմ է այդ օրինագծին, որովհետև այդ օրինագծով հայ ժողովրդի վրա 4 միլիոն [ռուբլի] տուրք են դնում:

Նախագահ - Քվեարկության եմ դնում օրինագիծն ամբողջությամբ: Կողմնակիցները ձեռք են բարձրացնում:

Օրինագիծը քվեարկության է դրվում ամբողջությամբ և անցնում է ընդդեմ Սոց.-դեմոկրատական ֆրակցիայի:

Նախագահ - Նիստը հայտարարում եմ փակված:

Նիստը փակվում է:

Քարտուղար՝ *Ե.Սարգսյան*

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 16-35: Բնագիր: Ձեռագիր: